

ՆՈՐ ԶԵՌՆԵՒԻՐԵԼԼԻՔ

Ի 15^ն ամսոյս ի Ս. Ալեկզեցին Գայխանեայ վանուց՝ Մայր Աթոռոյ մերոյ միաբաններէն աւագ սարկաւազունքն Ստեփաննոս շամաղտապեանց, Գէորդ Սուրէնեանց, Ըւազ Գ՝ Օնաղձեանց և ի միաբանութենէ վանուցն Գեղարդայ Մկրտիչ Այվազեանց արժանացան Քաջանայութեան աստիճանին ի ձեռն Գեթ. Պետրոս Ապիսկուպոսի Ա՝ եհապեանեանց, և ի 18^ն (ամսոյս) օրհնուեցան Ըրեղայ:

Ի ձեռնադրութեանն՝ առաջնոյն անուներ՝ Ընանիա, երկրորդին՝ Գէորդ, երրորդին՝ Օւաքարիա և չորրորդին՝ Պետրոս կոչեցաւ:

Մաղթեսցուք ի Տեառնէ տալ նոցա շքնորհ՝ կարողութիւն և արթնութիւն, որպէս զե ըստ իւրեանց բարձր կոչմանց և պաշտամանց ջանան հանդիսացուցանել զանձինս արժանաւոր մշակք և հարազատ և անձնանուէր պաշտօնեայք Ալեկզեցւոյս շայաստանեայց, ըստ ամենայնի եռանդուն և նախանձախնդիր լինելով յօգուտ և ի յառաջագիտութիւն Ազգի մերում:

ՆՈՐԸՆՏԻՐ ՀՈԳԱԸԱՐՉՈՒՔ

Ա՛ւհ. Աթողիկոսի օրհնութեան Աոնդակաւ՝ Ալաղարչապատայ եկեղեցական Գպրոցի շայոց շոգաբարձու հաստատուեցան պարոնայք Յովհաննէս Ստեփաննոսեանց, Աիկողայոս Երամեանց, Սարգիս Լնկիրբարեանց, Գրիգոր Մալխասեանց, Գրիգոր Շամքօրեանց, Գէորդ Աիւլեանտանեանց և Գիոնէսիոս Մուշեղեանց:

Ընշուշտ եմք՝ զինոր շոգաբարձուք պիտի ջանան նորին Ս. Օծութեան բաղձանաց համաձայն օգտաւէտ և արդիւնաւոր գանուելով իւրեանց պաշտօնին մէջ, ժողովրդեան ընտրութիւնը և համակրութիւն արժանաւորապէս արդարացունել և պսակել:

ԱՀԸՐՕՆ Ը. ՔԸՀԱՆԸՅ

Գ Ա Գ Ա Շ Ե Ա Ն Յ

Իւարեկրօն Մեկքիսեդէկ Քաջանայ Քալանթարեանց Աստրախանէն հետեւե սը կը հաղորդէ մեզ:

«Սրբուհոյ Աստուածամօր Աւագ Եկեղեցւոյ Աստրախանայ Տէր Ահարոն Աւագ Քաջանայն Դադաշեանց, Մարտի 1^{ին} ներկայ 1871 թուականի, կնքեց իւր երկրաւոր կեանքի ասպարէզը 83 տարեկան ալեղարդ հասակում մօտ իբրև 40 տարի անարատապէս քաջանայագործելով. նոյն ամսի 2^{ին} նորա մարմինը բերուեցաւ սուրբ Տիրամօր Տաճարը, և 3^{ին} թաղվեցաւ քաջանայական յուղարկաւորութեան վայելուչ կարգով:

Հանգուցեալը իւր երկար կեանքի և քաջանայագործութեան մէջ իւր խոհեմ և պարկեշտ դնացքով, կարողացել էր զրաւել զէպի ինքը բոլոր ժողովրդոց սիրտերը և համակրութիւնը:

Յիշատակ ալեղարդ և խոհեմ՝ Օերոյն օրհնութեամբ եղիցի»:

ԾԱՆՈՒՑՈՒՄՆ

Յայտնի է մերագնէից համարեալ բոլոր քաղաղաց, թէ Ազգային Դպրոց յառաջ տանկոյն և բարեկարգ գրութեամբ պահելոյն՝ ինչ տեսակ դժուարութիւնք կան, քանի՛ քանի՛ խոշնդոտք ընդ յառաջ կանեն, և քանի՛ ծանր հոգեմաշ համբերատարութեանց ենթարկուին նորա աշխատաւորք և անձանձիր մշակք. բայց վեհանձնութիւնն ողոյ և զօրութեան ստիպէ մեթել այդ ամենն և սիրով լցուցանել այն յատկացեալ պարտաւորութիւնքն, որոնք կուսման համաձայն զրուած համարուին իւրաքանչիւրոց վերայ. այսպէս ևս շոգաբարձութիւն շոգեւոր Աստուծաբանի շայոց Աղէքսանդրապօլու քանի՛ ամօք զեղբրուելով այդ տառապանաց մէջ չէր կարողանար իւր գործողութեանց համար տեղեկութիւն հասուցանել ի լուր ազգայնոց՝ նրանց ակնկալու սրտերուն աւելի ուրախութիւն պատճառելու. իսկ այժմոյս, որ կ'վայելէ բարեդէպ պատշաճաւորութիւններ և քաջայոյս գոանի, որ շոգեւոր Դպրոցըս այս Ազգականամ շայրապետի ամենայն շայոց Գէորդ Դ. Աթողիկոսի քաղցր մտադրութեանն արժանանալով՝ պէտք է ծաղկի և բարգաւաճի:

գարգայմամբ, թէ որ հետևարար յաջողին ամեն կարևորութիւնքն, զորս ստիպեալ գտանի Հոգարարձութիւնս լցուցանելոյ ըստ չափու ձեռնահասութեանց և միջոցաց, մանաւանդ ըստ ուսումնական մասին. յորոց պիտաւորն է կարօտութիւն երկուց Աւսուցչաց, որոնք թէ որ բարձր ուսմամբ գարգացած չ' լինին՝ պէտք է որ համապատասխանեն գոնէ՝ Գիմնադիական ուսման ընթացքն յառաջադիմութեամբ ամենայն առարկայից մէջ աւարտած անձի մը, որոց մասին ահաւասիկ հրաւեր կարգալով յունկս ցանկացողաց Հոգարարձութիւնս յուսայ, որ ամենայն զք այնպիսի ուսմամբ գարգացած եթէ բարեհաճի, թող նախընթացաբար զբաւոր կերպիւ յայանէ Բարեջան Փոխանորդական Յաջորդին վիճակիս, թէ վասն որպիսի առարկայից դասաստութեանց և որպիսի պայմանաւ յօժարի փարեղ պաշտօն ուսուցչութեան այս Կարգի մէջ՝ ի հարկէ հաղորդելով ընդ նմին տեղեկութիւն ի մասին ուր և որպիսաբար աւարտելոյն իւր ուսման ընթացքն. Այս տեղեկութիւնն և առաջարկութիւնն ստանալով պարտաւորի Հոգարարձութիւնս իւր հոգարարձական ժողովոյ մէջ խորհրդածելով պատասխանել փոյթ միջոցաւ. Արեւմն թող Հայասեր Ամադիրդ բարեհաճի այս փոքրիկ ազգարարութիւնն ամփոփել իւր արգիւնաշատ թերթերի մէջ նպատակաւ օգնելոյ կարևոր գրութեանն մեր Աւսումնարանի, լըցուցանելոյ այնու՝ եթէ Տէր յաջողեցէ՝ զգալի հարկաւորութիւնն նորին և պարտաւոր կացուցանելոյ Հայազգիս և աշխատաւորս:

Հ Ի Բ Ե Դ Ե Դ Ե Դ Ե Դ

ՍՈՒՐ ՀԱՆԳԵԿ ԲԻԻԶԱՆԳԵԱՆ

ՀՈՌՄԷՆ ՆՈՐ ՆՈՒԻՐԵԿ ՄԸ*

Այս օրերս կը լսենք որ Հոռոմն նուիրակի անուամբ Ատփն եկեղեցական մը Աստանդուարդիս պիտի գայ — Հայ Քաթօլիկ ազգայնոց խնդրոյն համար, Ազգայնոցս յիշողութեան կառաջարկեմ որ Արիկիոյ Անոն թագաւորին ժամանակը երբ Հոռոմայ կողմէն իր նուիրակ Քարտինալ մը առաքեցաւ մեր ազգային գործոց միջամուտ ըլլալու համար, Աստուածասէր և Ազգասէր Անոն թագաւորը իրեն հրամայեց որ ուստի եկեր է՝ հոն ետ դառնայ, և Քարտինալը Տարսօն չի հասած հարկադրեցաւ Արիկիոյ թագաւորութեան սահմաններէն հեռանալու. նոյն կրնան ընել Ազգայինք ներկայ ժամանակիս մէջ:

Հոռոմն եկող նուիրակը կամ հաւատոց վրայ պիտի բանակցի, կամ Ազգային գործողութեանց

վրայքը, Հաւատոց վերաբերեալ նիւթոց վրայ բանակցութիւն ընելու հարկ չի կայ, վասն զի ներկայ վէճը և խնդիրը հաւատոց վէճ կամ խընդիր չէ. Եւ ոչ իսկ ազգային գործողութեանց միջամուտ կրնայ ըլլալ. վասն զի այս գործողութիւնները կամ եկեղեցական են, կամ ժամանակաւոր. եթէ եկեղեցական են, մէկ նուիրակ մը, կամ առանձին առեալ միայն Արևմտեան եկեղեցին և Արևմտեան Պատրիարքութիւնը չի կարենար փոխել և ջնջել այն իրաւունք և արտօնութիւնը, կանոն և սահմանադրութիւնները, զորս Անդհանուր ժողովքը, սուրբ Հարց, Հայրապետը և Պարագպետը Արևելեան և Արևմտեան եկեղեցւոց վճիռներով հաստատուած և պատուիրած են. և ասոր համար վկայութիւններ բերել հարկ չէ, վասն զի ամենուն ծանօթ է. Բսկ եթէ այս գործողութիւնները ժամանակաւոր են, յիշեն Ազգայինք թէ Հոռոմն եկող նուիրակ մը ազգաց իրաւանց և օրինաց հակառակ գործած կըլլայ, երբ ինքն մեր ազգայնոց օտար ըլլալով՝ ազգային ժամանակաւոր գործողութեանց միջամուտ ըլլալու յանդգնի:

Օրէնք և իրաւունք ազգաց՝ ամեն ազգի առջև յարգեալ և պատկանելի են. Գիթէ Գերմանացին՝ Իտալացւոյն գործողութեան միջամտութիւն կրնայ ընել առանց անիրաւութիւն պատճառած ըլլալու անոր ազգային օրինաց և իրաւանց, Աւստի օրինացանց և ազգային իրաւանց բռնաբար անիրաւութիւն և մեծ անարգութիւն ըրած կըլլայ Հոռոմայ նուիրակը, եթէ որ և իցէ կերպով մեր ազգային գործողութեանց միջամտութիւն ընելու յանդգնի:

Բայց ի՞նչ է արդեօք պայտիսի նուիրակի մը գալուն բուն պատճառը. Պատասխան տալէս առաջ կը ցանկամ որ ազգայինք զանազանն Հոռոմայ եկեղեցին Հոռոմայ Արքունիքէն, այսինքն՝ այն որ հաւատոց վերաբերեալ է, նոյն է Հոռոմայ եկեղեցւոյն և ընդհանուր սուրբ եկեղեցւոյ, և այս նոյն հաւատքով կըլլայ միութիւն ի հաւատոյս Արևելեան և Արևմտեան եկեղեցւոյն, և պէտք է որ ամեն քրիստոնեայ այս միութիւնը ընդունի, յարգէ և պատուէ. Բսկ այն որ ազգաց եկեղեցական և ժամանակաւոր գործողութեանց կը վերաբերի, իւրաքանչիւր ազգ իր գործողութեանց տէր է, և պէտք է որ իր ազգութիւնը պահէ, պաշտպանէ և առաջ տանի. Անդհակառակն, Հոռոմայ Արքունեաց ներկայ բռնած ընթացքը բոլորովին պարստելի և ամենեցուն ատելի եղած է, և պատճառ զանազան և ցաւալի բաժանմանց. Հետեալ զէպքին յիշատակութիւնը բաւական ըլլայ իմ խօսքիս հաստատութեանը:

Հոռոմայ Արքունիքը Արևմտեան ազգաց գործողութեանց միջամուտ ըլլալով՝ և տիրապետութեան ողոյ հետեւած ըլլալով՝ մեծ կորուստ և վնասներ կրեց. Արևմտեան Տէրութիւնները Հոռո-

(*) Կամոյիկ ազգային մը գրած է այս յօդուածը: